

Արտավազդ Գ. Դարբինյան
Պատմագիտ. թեկնածու

«ՓԻՐՄԱԼԱՔԻ ԳՈՐԾԸ» (1941–1942 ԹԹ.)

Մի դրվագ ստալինյան բռնաձնշումներից*

Բանալի բառեր – «Փիրնալաքի գործ», 1937 թվական, ստալինյան բռնաձնշումներ, ձերբակալություն, վախ, սպառնալիք, գնդակահարություն, արքայ, արդարացում:

Այս տարի լրանում է ստալինյան բռնաձնշումների բարձրակետը համարվող 1937 թվականի 80–րդ տարին: Այն ժողովրդական հիշողության մեջ մնացել է որպես «եժովչինայի» սարսափելի տարի, երբ բռնությունները տարածվեցին խորհրդային հասարակության սոցիալական բոլոր խավերի ու շերտերի վրա գանգվածային բնույթ ստացան:

Ստալինյան բռնաձնշումների թեման հատկապես հետխորհրդային տարիներին խիստ կարևոր և արդիական է դարձել. հրատարակվել են մեծ քանակությամբ գիտական, պատմահրապարակախոսական և գեղարվեստական գործեր, որոնք նվիրված են գանգվածային բռնաձնշումներին¹: Հայաստանում այս թեման նույնպես եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում²:

Խորհրդային պատմագրության մեջ գերիշխում էր այն տեսակետը, որ ֆաշիստական Գերմանիայի՝ ԽՍՀՄ-ի վրա հարձակումից հետո քաղաքական բռնությունները երկրում գրեթե դադարեցին, ինչը չի համապատասխանում իրականությանը: Դրանից հետո էլ ամիսներ շարունակ գնացքները ուղղիչ աշխատանքային ճամբարներ էին տեղափոխում տասնյակ հազարավոր բռնադատվածների:

Այդ բռնությունները իրենց կոնկրետ դրսևորումներն են ունեցել նաև Խորհրդային Հայաստանում: Ավելին, ֆաշիստական Գերմանիայի հարձակումից հետո հատկապես ստալինյան պատժիչ մեքենան վերստին շրջա

*Հոդվածն ընդունվել է տպագրության 5.03.2017:

1 Տե՛ս **Волкогонов Дм.**, Триумф и трагедия, кн. 1–2, М., 1989, **Иванов Г.**, Гулаг в системе тоталитарного государства, М., 1997, Реабилитация. Политические процессы 30–х–50–х годов, М., 1991. Реабилитирован посмертно, вып. 1–2, М., 1989. **Солженицын Ал.** Архипелаг Гулаг., М., 1991, Суровая драма народа. М., 1989, **Ципко А.** История лжи или как заблудился призрак, М., 1990. **Рыбаков А.**, Дети Арбата. М., 1988. 2 **Գասպարյան Դավիթ**, Փակ դռների գաղտնիքը, Եր., 1994: **Մանուկյան Արմենակ**, Քաղաքական բռնաձնշումները Հայաստանում 1920–1953 թթ., Եր., 1999; **Վիրաբյան Ա.**, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, հասարակական-քաղաքական կյանքը (1945–1957 թթ.), Եր., 2001, **Ղազալեցյան Վ.**, 1937–ը Հայաստանում, Եր., 2004, Ստալինյան բռնաձնշումները Հայաստանում, պատմություն, հիշողություն, առօրյա, Եր., 2016:

Ռ. (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 1 (57), ԽՈՍՎԱՐ–ՄԱՐԿ, 2017
ՎՎՎ համահայկական հանդես

նառության մեջ դրեց Խորհրդային Հայաստանում իբր թե գոյություն ունեցող ընդհատակյա ազգայնական-դաշնակցական կազմակերպությունների մասին վարկածը, որոնք ցանկանում են գերմանացիների օգնությամբ տապալել խորհրդային կարգերը և վերականգնել Հայաստանի անկախությունը:

Այդ վարկածը կյանքի կոչելու կոնկրետ փաստ է 1941 թ. Թալինի շրջկենտրոնում և նույն շրջանի Փիրնալաք գյուղում 15 անձանց (հիմնականում երիտասարդների) ձերբակալությունը և արքայը: Այն մեղադրական եզրակացությունով անցնում էր «9265 քննչական գործ» համարակալումով: Մենք այն պայմանականորեն կանվանենք «Փիրնալաքի գործ»³: Սույն գործով ձերբակալվել են հետևյալ անձինք. 1. Միրաքյան Գևորգ Իսրայելի, 2. Սարգսյան Վաչե Համայակի, 3. Գաբրիելյան Աղասի Համբարձումի, 4. Հագոյան Հրանտ Արշակի, 5. Գաբրիելյան Աղասի Վարուսի, 6. Հակոբյան Պարույր Կարապետի, 7. Մելքոնյան Մամիկոն Գաբրիելի, 8. Սվազյան Լիպարիտ Խաչիկի, 9. Գաբրիելյան Հերբերտ Արամի, 10. Հարոյան Մնացական Համբարձումի, 11. Սարգսյան Վազգեն Թաթոսի, 12. Թումոյան Լևիկ Սմբատի, 13. Մադոյան-Քոզոյան Անդրանիկ Եղիազարի, 14. Հարոյան Բագրատ Մամիկոնի, 15. Քոչարյան Հակոբ Գևորգի⁴

Ուսումնասիրվող գործի վերաբերյալ նյութերը ամբողջովին վերցված են Հայաստանի Ազգային արխիվից: Դրանցից գատ՝ չափազանց արժեքավոր են նաև վերոհիշյալ գործով բռնադատվածներից մի քանի վերապրածների կամ նրանց հարազատների հետ ունեցած անձնական զրույցները:

Նշված սկզբնաղբյուրները հնարավորություն են տալիս ընդհանուր գծերով լուսաբանելու գործի պատմությունը՝ սկսած մեղադրյալների ձերբակալություններից, հարցաքննություններից, դատապարտումներից մինչև արդարացումը: Բնական է նաև, որ կան հարցեր, որոնց սպառնիչ պատասխան տալը մի շարք պատճառներով դժվար է:

Ծանոթանալով գործի նյութերին՝ համոզվում ենք, որ գրեթե բոլոր ձերբակալվածներին ներկայացվել են նույն մեղադրանքները, ուստի նպատակահարմար է անդրադառնալ նրանցից մի քանիսի գործերին:

«Փիրնալաքի խմբի» (եթե այն իսկապես գոյություն է ունեցել) ղեկավար Գևորգ Միրաքյանին հարցաքննել է ՆԳԺԿ-ի քննչական բաժնի ավագ քննիչ Զաքարյանը: Նա Միրաքյանի ձերբակալության պատճառ է համարել վերջինիս հակախորհրդային դաշնակցական գործունեությունը⁵: Սկզբից մերժելով իրեն ներկայացվող մեղադրանքը՝ Միրաքյանը շատ արագ խոստովանություններ է անում ամենայն հավանականությամբ ֆիզիկական բիրտ ուժի գործադրման, սպառնալիքների և շանտաժի ազդեցության ներքո: Մասնավորապես Գ. Միրաքյանը նշում է, որ իր իսկ նախաձեռնությամբ 1941 թ. ամռան-աշնան ամիսներին Փիրնալաքում ձևավորվել է հակախորհրդային ընդհատակյա դաշնակցական կազմակերպություն, որի նպատակն է եղել ֆաշիստական Գերմանիայի օգնությամբ Հայաստանում տապալել խորհրդային իշխանությունը և հաստատել «դաշնակցական կարգեր»: Ըստ Միրաքյանի ցուցմունքի՝ խմբի հիմնական խնդիրներն են եղել.

3 Փիրնալաքը, 1935-ից՝ Արեգ, իսկ այժմ՝ Թաթուլ, Թալինի շրջանի գյուղերից է, որտեղ հիմնականում բնակվում են Կարսի մարզի Նախճավան և Ծպնի գյուղերից 1918-1920 թթ. բռնագաղթված հայեր:

4 Տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 1191, ցուցակ 4, գործ 1832, թ. 1:

5 Տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 1191, ցուցակ 4, գործ 1833, թ. 2-3:

1. պահպանել խիստ գաղտնիություն,
2. իրականացնել ակտիվ հակախորհրդային քարոզչություն,
3. ձեռք բերել զենք ու զինամթերք,

Այնուհետև նա թվարկել է խմբի անդամների անուն-ազգանունները⁶:

Ըստ քննչական գործի նյութերի՝ ընդհատակյա կազմակերպության ակտիվ անդամներից էր Վաչե Սարգսյանը: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա ուսուցչական աշխատանքի էր անցել Վ. Թալին գյուղի միջնակարգ դպրոցում, հայոց լեզու էր դասավանդում տարրական դասարաններում: Ձերբակալվել է 1941 թ. նոյեմբերի 1-ին հետևյալ մեղադրանքով. «Վաչե Սարգսյանը հանդիսանում է Թալինի շրջանի հակահեղափոխական, ընդհատակյա դաշնակցական կազմակերպության անդամ: Նշված կազմակերպությունը իր առջև խնդիր է դրել խորհրդային իշխանության տապալումը, դաշնակցական կարգերի վերականգնումը Հայաստանում: Որպես կազմակերպության ակտիվ անդամ՝ նա կապված էր ղեկավարների հետ, որոնց հետ քննարկում էին կազմակերպության գործունեության հարցերը»⁷: Ձերբակալության որոշումը կայացրել է Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ Թալինի շրջանային բաժնի պետ, պետանվտանգության կրտսեր լեյտենանտ Պապանյանը:

Հաջորդ մեղադրյալներից էր Հերբերտ Դարբինյանը: Միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո նա ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ և առաջին կուրսն ավարտելուց հետո՝ ամռանը, վերադարձել է հայրենի Փիրնալաք գյուղ: Պատերազմի սկսվելուց հետո սպասելով զորակոչի՝ ժամանակավորապես աշխատանքի է անցել Թալինի շրջանի Սաբունչի գյուղի դպրոցում որպես մաթեմատիկայի ուսուցիչ: Ձերբակալվել է 1941 թ. նոյեմբերի 16-ին, հետևյալ մեղադրանքով. «Դարբինյան Հերբերտը հանդիսանում է Թալինի շրջանի հակահեղափոխական ընդհատակյա դաշնակցական կազմակերպության անդամ: Նշված կազմակերպության վերջնական նպատակն է ֆաշիստական Գերմանիայի օգնությամբ տապալել խորհրդային կարգերը և Հայաստանում հաստատել դաշնակցական պետություն»⁸:

Հարցաքննությունով անցնող մյուս 12 մեղադրյալներին ներկայացվել են նույն մեղադրանքները և կորզվել քննության համար անհրաժեշտ ինքնախոստովանությունները: Բոլոր հարցաքննվածները գրեթե առանց բացառության սկզբից ժխտել, ապա ընդունել են ներկայացված մեղադրանքները: Հարց է առաջանում. ինչու՞ էին նրանք ընդունում այդ մեղադրանքները: Դա պայմանավորված էր երկրում հաստատված բռնատիրական ռեժիմով: Ինքնախոստովանությունների ձեռքբերման մեխանիզմը ստալինյան ռեժիմը կիրառում էր դեռևս 1930-ական թթ. երկրորդ կեսից: Հայտնի է, որ այդ շրջանում մոսկովյան 3 բաց դատավարությունների հետ կապված՝ Ստալինի հանձնարարությամբ «Պրավդա» թերթում լույս է տեսնում մի հոդված՝ «Ինչու՞ էին նրանք խոստովանում» վերնագրով, որի նպատակն էր ցույց տալ, որ նման խոստովանությունները հետևանք չէին մեղադրյալների նկատմամբ կիրառված բռնությունների, որ իրականում նրանք եղել են կոմունիստական կուսակցության և խորհրդային կարգերի թշնամիներ⁹:

6 Տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 1191, ցուցակ 4, գործ 1833, թ. 2:

7 ՀԱԱ, ֆոնդ 1191, ցուցակ 4, գործ 1832, թ. 13:

8 Նույն տեղում, թ. 91:

9 Տե՛ս **Волкогонов Дм.** Триумф и трагедия. Политический портрет И. В. Сталина, кн. I, ч. 2, с. 232, М., 1989.

Այդ ֆարսը լիովին մերկացվեց ԽՄԿԿ ԿԿ-ի քաղբյուրոյի հատուկ հանձնաժողովի 1988 թ. փետրվարի 5-ի նիստի հետևյալ արձանագրումով. «Նախաքննությունը իրականացվել է սոցիալիստական օրինականության կուպիտալիստումներով, մեղադրյալներից ինքնախոստովանությունները ձեռք էին բերվում անթույլատրելի մեթոդներով»¹⁰:

Կասկածներից վեր է, որ «Փիրմալաքի գործով» անցնող բոլոր մեղադրյալների նկատմամբ կիրառվել են խոստովանություններ ձեռք բերելու վերոնշյալ մեթոդները:

1942 թ. մարտի 5-ին Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ հատուկ քննչական բաժանմունքի ավագ քննիչ Զաքարյանի և նույն բաժանմունքի պետ, պետանվտանգության կրտսեր լեյտենանտ Զալինյանի ստորագրությամբ Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ է ներկայացվում մեղադրական եզրակացությունը: Այն հաստատվում է նույն թվականի մարտի 18-ին ՆԳԺԿ ժողկոմ Մարտիրոսովի ստորագրությամբ և փոխանցվում ԽՍՀՄ ՆԳԺԿ-ին կից գործող Հատուկ խորհրդակցության վարույթ:

Մեղադրական եզրակացությունում նշվում էր, որ «Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ Թալինի շրջանային բաժանմունք տեղեկություններ են ստացվել այն մասին, որ նույն շրջանում գոյություն ունի ընդհատակյա հակահեղափոխական դաշնակցական կազմակերպություն, որը վարում է ակտիվ հակախորհրդային աշխատանք: Այդ տեղեկությունների հիման վրա 1941 թ. հոկտեմբերի 27-ին և դրանից հետո ձերբակալվել և քննության է ենթարկվել 15 մարդ»¹¹: Իսկ թե որոնք էին այդ տեղեկությունները փոխանցող աղբյուրը կամ աղբյուրները, բնականաբար չեն նշվում:

Ըստ մեղադրական եզրակացության՝ խմբի անդամների նպատակն է եղել գերմանացիների՝ Հայաստանի սահմաններին մոտենալու դեպքում կազմակերպել զինված ելույթ խորհրդային իշխանության դեմ, տապալել այն և գերմանացիների օգնությամբ Հայաստանում հաստատել «բուրժուական դաշնակցական հանրապետություն»: Խմբի անդամներ Գաբրիելյան Աղասին և Սարգսյան Վաչեն կազմել են հայ ժողովրդին ուղղված դիմումի տեքստ, որում կոչ էին անում պայքարել խորհրդային իշխանության դեմ՝ այն տապալելու և բուրժուական կարգեր հաստատելու նպատակով¹²:

Առաջնորդվելով Հայկական ԽՍՀ քրեական օրենսգրքի 19-59, 67 մաս 2-րդ և 68 հոդվածներով (հակախորհրդային քարոզչություն և գործունեություն)՝ հատուկ քննչական մարմինը առաջարկում է մեղադրյալներից 7-ին (ըստ ներկայացված ցանկի՝ 1-7-ին) պատժի առավելագույն չափ (գնդակահարություն), իսկ մնացած 8-ին՝ 10 տարի ազատազրկում:

Ըստ գործի նյութերի՝ մեղադրյալներից 2-ը (Մելքոնյան Մամիկոնը և Քոչարյան Հակոբը) իրենց մեղավոր չեն ճանաչել, իսկ մնացած 13-ը ընդունել են ներկայացված մեղադրանքները:

Հայկական ԽՍՀ դատախազության (դատախազ՝ Մեղավորյան) 1942 թ. մարտի 21-ի եզրակացությամբ՝ խմբի 15 անդամներից 3-ի նկատմամբ (Միրաքյան Գևորգ, Մելքոնյան Մամիկոն, Քոչարյան Հակոբ) առաջարկվում է կիրառել պատժի առավելագույն չափ (գնդակահարություն), իսկ 12-ին՝ 10

¹⁰ Волкоганов Дм., նշվ. աշխ., էջ 232:

¹¹ ՀԱԱ, ֆոնդ 1191, ցուցակ 4, գործ 1835 I, թ. 320:

¹² Տե՛ս նույն տեղում, թ. 321-322:

տարվա ազատագրկում¹³:

Համաձայն ԽՍՀՄ ՆԳԺԿ-ին կից Հատուկ խորհրդակցության 1942 թ. դեկտեմբերի 23-ի որոշման (բնական է, որ չի իրականացվել դատական գործընթաց)՝ խմբի անդամներից միայն մեկը՝ Միրաքյան Գևորգը (ըստ մեղադրական եզրակացության՝ նա հանդիսացել է հակահեղափոխական դաշնակցական կազմակերպության ղեկավար), դատապարտվել է պատժի առավելագույն չափի գնդակահարության՝ անձնական գույքի բռնագրավմամբ, իսկ մնացածը՝ ազատագրկման 10 տարի ժամկետով¹⁴: Հատուկ խորհրդակցության կողմից մեղադրյալների նկատմամբ առաջարկված պատժաչափերի փոփոխության հարցը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի:

Արխիվային նյութերը վկայում են, որ բոլոր դատապարտյալները կրել են սահմանված պատիժը ԳՈՒԼԱԳ-ի տարբեր ձամբարներում (Մագադան, Նորիլսկ, Կրասնոյարսկ և այլն):

Պատժաժամկետը լրանալուց հետո նրանք ազատ են արձակվել, չեն արդարացվել, ստացել են ազատ արքորականի կարգավիճակ՝ առանց նախկին բնակության վայր վերադառնալու իրավունքի: Ազատ արքորյալի կարգավիճակը շարունակվել է մինչև 1956-1957 թթ.:

Ազատագրկման տարիներին բռնադատվածները քանիցս դիմել են ԽՍՀՄ բարձրագույն իրավապահ մարմիններին՝ վերանայելու Հատուկ խորհրդակցության կողմից իրենց նկատմամբ կայացված անարդարացի որոշումները, սակայն որպես կանոն դրանք մնացել են անպատասխան: Միայն Ստալինի մահվանից և հատկապես ԽՄԿԿ XX համագումարից հետո (որտեղ քննադատվեց Ստալինի անձի պաշտամունքը) սկսվեց բռնադատվածների գործերի վերանայման և արդարացման գործընթացը:

Հայաստանի Ազգային արխիվում պահպանվել են «Փիրմալաքի գործով» դատապարտվածների՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդին և դատախազությանը ուղղված դիմում-բողոքները, որտեղ հեղինակները խնդրում են վերանայել իրենց գործերը, խստագույնս պատժել անարդարացի քննություն իրականացրած մարմինների պատասխանատուներին և կայացնել արդարացման որոշումներ:

Անդրադառնանք նշված դիմում-բողոքներից մի քանիսին: Արդեն նախկին դատապարտյալ Աղասի Գաբրիելյանի 1955 թ. հունիսի 27-ի ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին կից ՊԱԿ-ին ուղղված բողոքում նշվում է, որ այսպես կոչված՝ հակահեղափոխական դաշնակցական ընդհատակյա կազմակերպության անդամների ձերբակալությունը տեղի է ունեցել Վ. Թալինի միջնակարգ դպրոցի ուսուցիչ, պրովոկատոր (այդպես է նշված դիմումում - Ա. Դ.) Գուրգեն Քոչարյանի կեղծ մատնության հետևանքով¹⁵: Այս անունը հիշատակված է նաև Վաչե Սարգսյանի¹⁶, Հրանտ Հակոբյանի¹⁷ և այլոց դիմում-բողոքներում: Ըստ վերոհիշյալների վկայությունների՝ Քոչարյանը, կատարելով պետանվտանգության մարմինների հանձնարարությունը, դեռևս մինչև խմբի ձերբակալությունը քանիցս փորձել է սադրանքի ենթարկել երիտասարդներին: Հաջողության չհասնելով՝ նա դիմել է զրպարտանքի և

13 Տե՛ս նույն տեղում, թ. 337:

14 Տե՛ս նույն տեղում, թ. 41:

15 Տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 1191, ցուցակ 4, գործ 1836, թ. 251:

16 Տե՛ս նույն տեղում, թ. 289:

17 Տե՛ս նույն տեղում, թ. 46:

մատնության մեթոդներին:

Գուրգեն Բոչարյանը 1956 թ. փետրվարի 11-ին պետանվտանգության մարմինների կողմից հարցաքննության ժամանակ նշում է, որ դեռևս 1941 թ. Միրաքյան Գևորգը իր հետ ունեցած գրույցի ժամանակ ասել է. «Մենք ստեղծել ենք հակախորհրդային կազմակերպություն, որի նպատակն է գործնական օգնություն ցույց տալ գերմանացիներին Խորհրդային Միության դեմ պայքարում և առաջարկել է մտնել այդ կազմակերպության մեջ, որին ինքը պատասխանել է մեծամոլ»¹⁸:

«Այդ գրույցից որոշ ժամանակ անց,– շարունակում է Բոչարյանը,– նա դպրոցի իր աշխատանքային սեղանի դարակում հայտնաբերել է 15-16 անուններից բաղկացած մի ցուցակ, որտեղ նշված է եղել նաև իր ազգանունը: Ցուցակի վերջում գրված է, որ տեղի է ունենալու կարևոր խորհրդակցություն, որին ցուցակում ընդգրկված անձանց մասնակցությունը պարտադիր է: Ես կասկածեցի, որ դա Միրաքյանի հակախորհրդային կազմակերպության անդամների ցուցակն է և այն հանձնեցի Թալինի շրջանի պետանվտանգության մարմիններին: Դրանից շատ չանցած Միրաքյանը, Հակոբյանը և ուրիշներ ձերբակալվեցին»¹⁹:

Այստեղ բնական հարցեր են առաջանում. **առաջին**, եթե Գ. Բոչարյանը մերժել էր Միրաքյանի առաջարկությունը՝ մաս կազմել այդ կազմակերպությանը, ապա ինչու՞ է նրա ազգանունը հայտնվել ցուցակում, **երկրորդ**՝ միթե ենթադրյալ հակախորհրդային գաղտնի կազմակերպության անդամները այդքան անփոյթ և անզգույշ էին, որ այդ կարևոր փաստաթուղթը թողել էին Գ. Բոչարյանի աշխատանքային սեղանի դարակում և վերջապես **երրորդ**՝ ինչու՞ ձերբակալվածների հարցաքննությունների ժամանակ Գ. Բոչարյանը չի անցել գոնե որպես վկա: Անկասկած, դա կարող էր էապես նպաստել կեղծ և սարքովի գործի բացահայտմանը: Այստեղից հետևություն, որ Գ. Բոչարյանը, իրոք, եղել է պետանվտանգության մարմինների գործակալ և նրանց հանձնարարությամբ զբաղվել է սադրիչ մատնություններով:

Դիմում բողոքների հեղինակները չեն շրջանցել մի կարևոր հարց ևս: Խոսքը վերաբերում է նրանց խոստովանություններին: Գործով մեղադրյալ Վաչե Սարգսյանը այդ կապակցությամբ նշում է. «Հարցաքննությունների արձանագրությունների տակ եղած ստորագրությունները, այն է՝ 1941 թ. նոյեմբերի 1-ին, նոյեմբերի 27-ին, դեկտեմբերի 25-ին, 1942 թ. հունվարի 15-ին՝ իմն են: Ես ստորագրել եմ, սակայն այդ ցուցմունքները ձիշտ չեն և իրականությանը չեն համապատասխանում: Ես նման ցուցմունքներ չեմ տվել, քննիչ Զաքարյանը ինչ գրել է, ես էլ ստորագրել եմ առանց կարդալու՝ նրա ծեծի և սպառնալիքների ազդեցության տակ»²⁰:

Նույն գործով մեղադրյալ Հրանտ Հագոյանը իր դիմում-բողոքում գրում է. «Մեզանից յուրաքանչյուրը ընդունում էր այն ամենը, ինչ ասում էր քննիչ Զաքարյանը, քանի որ այդ նողկալի զրպարտանքի յուրաքանչյուր ժխտումը ուղեկցվում էր ֆիզիկական բռնություններով և միայն այն մտքից, որ կենթարկվենք խոշտանգումների, վախից դողում էինք և հարցերին տալիս հաս-

18 Նույն տեղում, թ. 100:

19 Նույն տեղում, թ. 101:

20 Նույն տեղում, թ. 281:

տատող պատասխաններ՝ «ինձ մեղավոր եմ ճանաչում»²¹:

Այսօր առավել ևս ամբողջական պատկերացում ունենալով ստալինյան-բերիայական հանցավոր պատժիչ մեքենայի կողմից իրականացված ոճրագործությունների մասին, վստահաբար կարող ենք ասել, որ վերոհիշյալ խմբի անդամները մաս են կազմել ռեժիմի զոհ գնացած միլիոնավոր անմեղ խորհրդային քաղաքացիների:

Կատարվածը կարող ենք դիտարկել որպես Բերիայի կողմից, այսպես կոչված, «հայ ազգայնականության» դեմ պայքարի դրսևորումներից մեկը: Պայքար, որն իրականացվել է նրան հիւ-հնազանդ ծառայող՝ Խորհրդային Հայաստանի իրավապահ մարմինների պատասխանատուների ձեռքերով: Քննիչներ Զաքարյանի, Զալինյանի և այլոց արդարացի գնահատականը կտա ժամանակը: Իսկ «Փիրմալաքի գործը» ունեցավ հետևյալ հանգուցալուծումը: Հայկական ԽՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերով Դատական կոլեգիայի 1956 թ. ապրիլի 10-ի որոշման մեջ նշվում է հետևյալը. «Քննության առնելով ԽՍՀՄ Գերագույն դատախազի կողմից ներկայացված հսկողական բողոքը՝ ԽՍՀՄ ՆԳԺԿ-ին կից Հատուկ խորհրդակցության որոշումը չեղյալ է համարվում, իսկ նրանց նկատմամբ գործը դադարեցվում է մեղադրանքի չապացուցվածության պատճառով, այսինքն՝ նրանք արդարացված են: Նրանց վրա տարածվում է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1955 թ. սեպտեմբերի 8-ի «Աշխատանքային ստաժի, աշխատանքի տեղավորման, թոշակով ապահովման այն քաղաքացիների նկատմամբ, որոնք անհիմն ենթարկվել են քրեական պատասխանատվության, իսկ հետագայում արդարացվել են որոշումը»²²:

Որպես ամփոփում կցանկանայինք արտահայտել որոշ նկատառումներ: Պահպանված արխիվային նյութերը հնարավորություն չեն տալիս սպառիչ պատասխաններ տալ մի շարք հարցերի:

Առաջին՝ իսկապես գոյություն ունեցել է նշված հակախորհրդային ընդահատակյա կազմակերպությունը:

Երկրորդ՝ հատկապես ու՞մ էր ձեռնառու նման կազմակերպության գոյության հորինումը:

Երրորդ՝ ի՞նչ հիմքերով արդարացվեցին այսպես կոչված՝ «Փիրմալաքի խմբի» անդամները:

Հարցեր, որոնք պահանջում են թեմայի հետագա առավել խոր և բազմակողմանի ուսումնասիրություն: Չէ՞ որ խոսքը տվյալ դեպքում մեկ ու կես տասնյակ երիտասարդների խեղված ճակատագրերի մասին է: Անհրաժեշտ է վեր հանել ողջ ձշմարտությունը կատարված ողբերգության մասին, որպեսզի այն այլևս չկրկնվի մեր ժամանակներում:

Արտավազդ Գ. Դարբինյան – ԵՊՀ դասախոս, գիտական հետաքրքրությունների բնագավառները՝ անդրկովկասյան գյուղի սոցիալական կառուցվածքի փոփոխությունները 1920-ական թվականներին, ստալինյան բռնաճնշումները 1930-1940-ական թվականներին, Արցախյան հիմնախնդիրն արդի փուլում: Հեղինակ է շուրջ երկու տասնյակ գիտական հոդվածների և ուսումնամեթոդական ծրագրերի:

21 Նույն տեղում, թ. 48:

22 ՀԱԱ, ֆոնդ 1191, ցուցակ 4, գործ 1836, թ. 41:

Summary

“THE PIRMALAK CASE” (1941–1942)

One fragment of Stalinist repressions

Artavazd G. Darbinyan

Key words – “The case of Pirmalak”, 1937, Stalin’s repressions, arrest, fear, threat, execution, exile, exculpation.

In Soviet historiography, the dominant opinion is that, after the Nazi Germany attack, political violence in the Soviet Union practically ceased, but it is not true. After the attack, the trains continued to deliver tens of thousands of victims of political repressions to labor camps.

At the first stage of the war, in 1941, a concrete example of political violence in Armenia was the arrest and exile of 15 people (mostly youth) of the Talin region and the village Pirmalak of the same region.

The case was based on the indictment numbered “investigation file 9265”, which we will conditionally call the “Pirmalak Case”.

According to the decision taken by the special committee by NKVD on December 23, 1942 (of course, the trial was not conducted), one of the members of the group – Gevorg Mirakyan (according to the indictment, he was the leader of the anti-revolutionary Dashnak organization) was sentenced to maximum punishment – execution by firing squad with the confiscation of personal property, and the other members of the group were sentenced to 10 years in prison.

Резюме

“ДЕЛО ПИРМАЛАКА” (1941–1942)

Один фрагмент из сталинских репрессий

Артавазд Г. Дарбинян

Key words – “Дело Пирмалака”, 1937 год, сталинские репрессии, арест, страх, угроза, расстрел, изгнание, оправдание.

В советской историографии доминирует мнение, что после нападения нацистской Германии политическое насилие в Советском Союзе практически прекратилось, но это не так. После этого поезда продолжали доставлять в трудовые лагеря десятки тысяч жертв политических репрессий.

На первом этапе войны, в 1941-ом году в Армении конкретным примером политического насилия является арест и ссылка 15 человек (в основном молодежи) в райцентре Талин и деревне того же района Пирмалак.

Дело проходило по обвинительному заключению под номером “следственное дело 9265”, которое мы условно назовем “Дело Пирмалака”.

Согласно решению принятому особым совещанием при НКВД СССР 23 декабря 1942 года (конечно, судебный процесс не проводился), один из членов группы Геворг Миракян (согласно обвинительному заключению, он был лидером анти-революционной дашнакской организации) был приговорен к максимальному наказанию – расстрелу, с конфискацией личного имущества, а остальные были приговорены к 10 годам тюрьмы.

ՀԻՄՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏԻՐՈՍՎԱՆ
 1942 թ. 11/11
 ՄԵԳԱՎՈՐՅԱՆ
 1942 թ.
 ՍՈՎԻՆՏԱԿԱՆ ԶԱՎԵՐՄԱՆ
 ՄԱՐՏԻՐՈՍՎԱՆ
 ՄԵԳԱՎՈՐՅԱՆ
 1942 թ.

*Այս կետը
 չի քննարկվում
 ինչպես
 օրինակ
 ՄԵԳԱՎՈՐՅԱՆ
 ՄԱՐՏԻՐՈՍՎԱՆ
 01 հոկտեմբեր
 1941 թ.
 ՄԵԳԱՎՈՐՅԱՆ
 ՄԱՐՏԻՐՈՍՎԱՆ
 30/11/42*

По следделу № 9265.

По обвинению:

- + 1) МИРАКЯНА Геворка Израеловича B-1336
- + 2) САРКИСЯНА Ваче Амаяковича
- + 3) ГАБРЕԼԻԱՆԱ Ագասի Ամբարձումովիչա
- + 4) ԱՐՅԱՆԱ Գրանտա Արշակովիչա
- + 5) ԸԱՐՅԻՆԻՅԱՆԱ Ագասի Վարսովիչա
- + 6) ԱՐՅԱՆԱ Փարսիպա Կարապետովիչա
- + 7) ՄԵԼԿՈՅՆԱՆԱ Մամիկոնա Դաբրելովիչա
- + 8) ՏՎԱԶԻՅԱՆԱ Լիբարիտա Խաչատրովիչա
- + 9) ԸԱՐՅԻՆԻՅԱՆԱ Էլբերտա Արամովիչա
- + 10) ԱՐՅԱՆԱ Մառականա Ամբարձումովիչա
- + 11) ՏԱՐԿԻՍԻՅԱՆԱ Վազգենա Կատոսովիչա
- + 12) ԿՄՈՅՆԱ Լևիկա Տումբատովիչա
- + 13) ՄԱԾՅԱՆԱ-ԲՕՅՅԱՆԱ Անդրանիկա Եղիազարովիչա
- + 14) ԱՐՅԱՆԱ Բաղրատա Մամիկոնովիչա
- + 15) ԿՈՇԱՐԻՅԱՆԱ Ակոփա Գեորգիովիչա, -

в преступлениях, предусмотренных ст.ст. 19-59, 67 ч. 2-ая и 68 УК Армянской ССР.

В Талинское РО НКВД Армянской ССР поступили данные о том, что в том же районе существует нелегальная контрреволюционная дашнакская организация, ведущая активную антисоветскую работу.

На основании этих данных, 27-го октября 1941 года и позже, были арестованы и привлечены к следствию вышеперечисленные обвиняемые в количестве 15 человек.

Произведенным по делу расследованием установлено, что еще с 1939 года, арестованные по настоящему делу - МИРАКЯН Геворк Израелович и АՐՅԱՆԱ Փարսիպա Կարապետովիչ, будучи антисоветски-настроенными личностями были связаны друг с другом, подыскивали каналы для ведения организованной контрреволюционной работы, имея цель связаться с центром для получения руководства.

В 1941 году, МИРАКЯН Геворк и АՐՅԱՆԱ Փարսիպա активизировали свою организационную контрреволюционную работу и в Талинском районе сколотили из числа антисоветско-настроенной молодежи к/р.

«Փիրմալարի գործով» մեղադրական եզրակացությունը

Թ (ԺԵ) քաղք, թիվ 1 (57), հունվար-մարտ, 2017

ՎԿԱ հաստատված հանդես

ЗАКЛЮЧЕНИЕ

С/Секрет

337

21 марта 1942 года

П. Бороват

В порядке ст. 210 УПК Арм. ССР рассмотрев след. дело за № 9265 по обвинению:

- | | |
|------------------------------------|--|
| 1. Миракяна Геворка Израеловича | 9. Дарбиняна Эдберта Арамов. |
| 2. Саркисяна Ваче Амаяковича | 10. Саркисяна Вазгена Татос. |
| 3. Габриеляна Агаси Амбарцумовича | 11. Арояна Мнацакана Амбарц. |
| 4. Акопяна Гранта Аршаковича | 12. Тумояна Левика Сумбатов. |
| 5. Дарбиняна Агаси Варосовича | 13. Мадояна -Вазояна Андраника
Егвазаровича |
| 6. Акопяна Паруйра Карапетовича | 14. Арояна Баграта Мамиконов. |
| 7. Мелконяна Шамикона Габриеловича | 15. Кочаряна Акопа Геворков. |
| 8. Свааяна Липарита Качатуровича | |

В преступлениях, предусмотренных ст. ст. 19-59, 67 ч. П. 68 УК Армянской ССР

Наше:

Что обвинительное заключение полностью соответствует материалам дела.

В предъявленном обвинении все вышеуказанные обвиняемые за исключением кочаряна Акопа Геворковича признали себя виновными.

Кочарян Акоп изобличается показаниями руководителя к/р организации Миракяна Геворка Израеловича и сообщениями 4-х источников (см. пакет). Цель контрреволюционной дашнакской организации в случае вторжения германских войск на территорию Закавказья - организовать вооруженное выступление с помощью фашистской армии свергнуть Советскую власть, поэтому-

Полагаю:

Меру наказания по след. делу за № 9265 применить

- | | | | |
|-----------------|--------|--------------------------|--------|
| Миракяна Г.И. | - ВМН | 9. Дарбиняна Э.А. | - 10л. |
| Саркисяна В.А. | - 10л. | 10. Арояна М.А. | - 10л. |
| Габриеляна А.А. | - 10л. | 11. Саркисяна В.Т. | - 10л. |
| Акопяна Г.А. | - 10л. | 12. Тумояна Л.С. | - 10л. |
| Дарбиняна А.К. | - 10л. | 13. Мадояна-Вазояна А.Е. | 10л. |
| Акопян П.К. | - 10л. | 14. Ароян Б.М. | - 10л. |
| Мелконян М.Г. | - ВМН | 15. Кочарян А.Г. | - ВМН |
| Свааян Д.Х. | - 10л. | | |

И след. дело по ст. ст. 19-59, 67 и 68 УК Арм. ССР направить на рассмотрение Особого Совещания при НКВД СССР.

ПРОТОКОЛ ПРИ СУД

ДЕКАБРИ